




ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐԾՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի 15 Մարտ 1913 Թիւ 86

«Մրբազան Բանաստեղծական Պիոս Ժ. կր մաղթէ որ Կարողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շարունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար Մրբազան Հայրն արագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կաթող. Մէրի սէլ Վաթի, առ Ամեն. Տ. Պօպա Պետրոս Ժ. Թեոքեան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ, 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քու տնամարտ:

ԴԵՊՅԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

1. Կաթողիկէ մը որ Կաթողիկէ չէ:—2. Բաւականոք որոշումներ:—3. Անմիտ պնդումներ:

1. Մէկը կայ որ հակառակ իր ՀԿաթողիկէ սկզբունքներուն, Կաթողիկէի անուանով մերթ ընդ մերթ հրապարակ կու գայ, կը ցցուի իբր խրատելիլակ մը: Ասիկա՝ Պ. Գրիգոր Մալխասն է: Նախ և առաջ պէտք է դիտել որ նա գրելիք միշտ Ազատամարտ թերթին մէջ կը գրէ, թերթ մը որ ի պաշտօնէ անկրօն է. իր համոզումներուն պոյնը ասով ալ կ'ուզէ ցուցադրել հանրութեան առջեւ: Իրեն համար ո'չ թէ միայն Կաթողիկէ, այլ և ոչ մի Քրիստոնէական Սրբութիւն կայ. ան կը հայհոյէ՝ ինչպէս Ս. Աթոռոյ, նոյն-

պէս նաեւ անխտրաբար Ս. Հաւատոյ ամենահաւորական խորհրդոց գէմ, ինչպէս Ս. Երրորդութեան, Ս. Հաղորդութեան գէմ ևն. իր յօդուածները հայհոյութիւններու և նուիրականութեանց ծաղրանքներու շղթայ մը կը կազմեն: Այլ ու ձախ կը յարձակի, ըլլա՛յ Հռոմ, ըլլա՛յ Կաթողիկէութիւն, ըլլա՛յ Սիւն-հոգոս, Կաթողիկոս կամ Նուիրապետութիւն՝ իր ամէն աստիճաններով. ըլլա՛ն Մխիթարեանք Վենետիոյ կամ Վիեննայ, անխտր. ըլլա՛ն նոյն իսկ Էջմիածնականք. կը յարձակի անզուսպ. կը դատէ կը վճռէ. կը նախատէ կ'անիծէ, անվրդով և չնական, ամենէն ստորին բացատրութիւններով, ամենէն անպատեհաւ բարբառնջանօք, յերկբանօք և անճշգրտութիւններով, ամենաթանձր տղիտութեամբ, իր յօդուածները մտքի և ոճոյ ստորնութեանց թանգարանին առաջնակարգ մէկ հաւաքածոյն կրնան կազմել: Գրելու և

երեւնալու մարմաջն է որ զինք կը մղէ . ուստի իր այս ճիգերուն հիմը կը կազմէ սոսկ ամբարտաւանութիւն . որով հաստատապէս կը հաւատայ թէ իր արձակած վճիռները անպատասխանելի, անդիմադրելի, նոյն իսկ անվիճելի և անխալ են . ընթերցողներն ալ, եթէ երբեք ունի, տխմարներ կ'ենթադրէ : Այս երկակենցաղը, որ անհաւատ է և հաւատալեաց վրայ կ'ուզէ վիճել, որ Կաթողիկէ է և չէ, որ իբրեւ թէ նուրը ոճաբանութիւններու դարձաբձիկ օղակներուն մէջէն հայհոյանաց տիղմեր կը սրսկէ, հազիւ թէ կը տեսնէ կամ կը կռահէ թէ մէկը իրեն պէս չխորհիր — և կարծեմ ո՛չ ոք կը խորհի իրեն պէս, — թէ մէկը, լոկ ստեղծուած !, կը համարձակի իրեն ընդդիմախօսել, թէ մէկը կը յանդգնի իր մտքին՝ իրմէ պաշտեցեալ Սաքեամուհիական այլանդակ կուռքը պատուանդանէն վար առնուլ և փշրել, ահա՛ կը խռովի, կ'ընդվզի, կ'այլաբանի, ի սրտմտութիւն բարկութեան կը բրդի, և . . . կը տեղայ նախատինքներ և կը հայհոյէ : Իր քննադատածներուն հետ իրական կոխներու միջամուխ կ'ըլլայ, ի պահանջել հարկին : Ժամանակին Ուսումնարանի խնամակալութենէն վճարուեցաւ, իբր անկրօն սկզբունքներ ներմուծող : Ամեն . Թէրզեան Կաթողիկոսին Ատանայէն գալուն՝ մեծ-սրահին մէջ, ո՛չ մէկէն հրաւիրուած, նա՛ մանաւանդ պաշտօնական կարգացուցակի հակառակ, ինքնամատոյց սկսաւ ճառ մը կարդալ, լի փեղցփեղ մոլորութիւններով, իբրեւ ազատական — արմատական, պարզելով նոր-Կաթողիկոսէն սպասուած հիմնական բարեփոխութիւնները՝ աշխարհականացումի, Հռոմի բռնակալութենէն ազատագրումի, ազատախոհութեան, գրեթէ անկրօնութեան . . . ան ատեն նողկանքի սարսուռ մը անցաւ ամբողջ սրահին վրայէն, և ամբողջ սրահը պոռթկաց ահաւոր բողոքով մը, սուլեց այդ աննուէր յաւակնոտը, և աղաղակներով ընդմիջեց այդ ապաժաման և անկերպարան մանաւանդ թէ չարին պատկանդսրան այդ ճառը . գիտէ՞ք թէ շարունակելու թոյլտուութիւն առնելու մտօք ինչ ըսելու յանդգնե-

ցաւ, toupet ունեցաւ այդ շուարած մարդը . «Մնացածը աղէկ է» մոմուաց դողահար եւ գունատ . ուրեմն ինքը, իր բերնով, առաջի անթիւ բազմութեան, կը խոստովանէր թէ մինչեւ ցայն վայր ըսածները բոլոր գէե էին . . . Թանկագին խոստովանութիւն . բայց մընացածին աղէկ ըլլալը ո՛վ կ'երաշխաւորէր . այն բազմութեան վիրաւորուած և լնդվզած պատուախնդիր խիղճը արդար դատաստանով ճգնեց այդ ժպիրհ լեզուն . չուզեց խոստովանեալ գեռէն վերջը անխոստովանելի աղէկը լսել . և իրաւամբ, եթէ այդ պանծացեալ «Մնացած աղէկ»ը այն օրէն ի վեր մինչեւ ցայսօր իր գրածներն են, աւա՛ղ, անոնք առաջիններէն շատ աւելի գէե են, զրպարտական, մոլորական և անկրօն :

Մե՛ղք այն համայնքին որ այսպիսի քննադատներ (?!), այսպիսի սոփեատներ ունի . բայց միտթարանք է գիտնալ թէ ո՛չ ոք աւոր կարեւորութիւն կու տայ կամ անով կը զբաղի : Մենք և ոչ կ'ուզէինք զինք անուանել . սակայն վերջերս իրեն պատիւ ընողներ եղան՝ իրեն այլանդակութեանց և ամբարտաւան և հայհոյալից նախատինքներուն գէմ բողոքելով : Չարժե՛ր . ասոնք՝ լաւագոյն դատի մը թող գործածեն իրենց տաղանդը, գրիչը, բողոքը : Իրեն և իր նմաններուն պէտք է յիշեցնել զՍ . Շնորհալին և զՏուտէորդին : Իրեն և իր նմաններուն պէտք է ըսել . «Լուսիւն իմ խօսի բնդ քեզ» . պէտք է ըսել Տանգէի հետ (ԴԺ . Գ . 51) . «Ձխօսինք աւուց վրայ . այլ նայե՛ ու անցի՛ր» :

Non ragionam di lor, ma guarda et passa!

2 . Վարչական ըսուած ժողովը շատ զարմանալի որոշողութիւններ կու տայ : Նախ և առաջ պէտք է զիտել որ գործունէութիւն ցոյց տալու պատրուակաւ, ամէնէն աննշան խօսակցութիւններն անգամ հրատարակութեան կու տայ, բան մը ըրած ըլլալու ցուցադրութեամբ . և արդէն ամէնն ալ աննշան են՝ իր գործերը, եղած զրամները՝ ո՛վ գիտէ ինչպէս ծախսելէն զատ գործ չունի, ո՛չ յանձնէ տալ, ո՛չ հնարել հայթայթել, ո՛չ ստեղծագործել . և ընական ու տրամաբանական

խոտապահանջ եղբակացութեամբ, պէտք է որ աննշան ըլլան իր գործերը. քանի որ էականապէս սխալ է իր կացութիւնը եւ չունի գոյութեան իրաւունք, իբրեւ զուրկ եկեղեցական օժանդակութենէն, եկեղեցական օրինաւոր նախագահութենէն, քանի որ՝ մանաւանդ, ապօրինաւոր, հերձուածող ու բանադրեալ հրատարակուած է Ս. Եկեղեցւոյ Գերագոյն Հովուապետէն: Արդ կը հրատարակէ թէ իրեն դիմումներ կ'ըլլան Տրապիզոնէն, Մարգուանէն, Խարբերդէն, Զմիւռնիայէն, Մուշէն. որպէսզի այն տեղերու վարչականները հաստատել տայ. և ինք հաստատական որոշողութիւն կու տայ. էլ պիզի իօթէ կեօսսիւն կ'ըսէ թրքական առակը: Զարմանալի բան. մարդ երբ կը մոլորի, յիշաւի չնչին բաներու անգամ կը նուաստանայ: Գիտէ՞ք որոնք են դիմողները. մէկ երկու հոգի, խռովարար, միշտ գժգոն, միշտ իշխելու առիթ փնտռող, որպիսիք կը գլուխուին ամէն քաղաքներու մէջ, անորակելի մարդիկ, իշխանութեան ըմբոստ ամբարտաւաններ, որոնք պատեն առիթով կ'ուզեն իրենց անուն չինել կամ... ստացուած: Ասոնց դիմումն ընդունողը պէտք է յիշէ անաչառ առակը. «Նման գնմանն սիրէ»: Ասոնց թիւը, որակութիւնը, աստիճանը, իրաւունքը, բնաւ չեն որոշեր. կ'ըսեն միայն. «Ա. Ա. տեղէն դիմում եղած է». և մէկ դիմող թողուն այն տեղի ժողովուրդին ահագին մեծամասնութիւնը. որովհետեւ իրենց գործին կու գայ հասարակութիւնը խաբելը: Անուղիղ ընթացք, ընթացք մոլորեալներու. Տեհիզէ Տեհիզէ երջանա ստորլըր: Տեսէ՞ք, միեւնոյն ընթացք՝ Վիեննայի Միթիթարեաններու էջմիածնական ձայնապետին խնդրոյն մէջ: Աս մարդուն դիմումն ընդունելու են. ի՞նչ սկզբունքով. Վիեննայի Միթիթարեանց ներքին մէկ գործն է այդ. իրենք ի՞նչ կը խառնուին. և մարդը էջմիածնական է. այն պաշտօնին մտած ատենը երաշխաւորութիւն առած էր միթէ Վարչականէն: Յետոյ, կ'որոշեն ազդարարել Միթիթարեանց որ մարդուն գոնէ հանգստեան թոշակ մը յատկացնեն: Գոնէ!.. այսինքն կ'ուզեն ըսել թէ՝ այդ դպրապետը

գործածելու կրնայինք ստիպել զձեզ, ի հեճուեալ Կաթողիկոսական իշխանութեան. սակայն առ այժմ գոնէ... Եւ ի՞նչ իրաւունքով պատշոնապէս կ'որոշեն զայդ. զի որոշումը վճիռ է. և վճիռը իր հպատակին կը տրուի. կ'արժէ տեսնել թէ Միթիթարեանք պիտի հնազանդին??... Փաստաբաններ կան այդ ժողովոյն մէջ. բայց «Ամբարտաւան մոլորութիւն կուրացուցանէ»: Սակայն պէտք էր գոնէ ծաղրելի չըլլալ... Մնացածը ասոնց նման. չարժեք կանգ առնուլ:

3. Զարմանալի երեւոյթ մըն է որ էջմիածնականք չեն կրնար յագեցնել բնաւ իրենց մարմաջը Հայ-Կաթողիկէից դէմ գործելու և գրելու. եւ կարծես Հայութեան ծոցին մէջ Կաթողիկէութիւնը իրենց փուշ մը եղած է, մղձաւանջ դարձած է: Առիթ չեն փախցըներ մեր վրայ յարձակելու. եւ մեր ազնիւ պարոնայք ալ անոնց մատակարարեցին այնպիսի առիթ մը զոր և ոչ կրնային երբեք երազել. քանզի յիշաւի չէր կրնար երազուիլ այսպիսի համայնագիծը, անպատուութիւն, խայտառակ վիճակ՝ ինչպէս ստեղծեցին ըմբոսաները:

Անցեալները էջմիածնական թերթ մը գրած է թէ՝ Էրեսակ Տեառն աղօթքը, Վարդարանը, եւլն. Լատինացիներ է եղեր. պէտք չէ եղեր այս աղօթքներն ընել, մէկդի թողլով Շնորհալին, Նարեկացին, եւլն. — Այսքան խղճամտութիւնն յիշաւի զարմանալի է. Նախ իրենց ի՞նչ պէտք է Կաթողիկէ Հայոց գործերուն խառնուիլ. ո՞վ տուեր է իրենց այդ առաքելութիւնը: Յետոյ, աղօթք մը, ջերմանալութիւն մը փոխ առնելով ծէս կը փոխուի եղեր. ո՞ւր սորվեր են այս տրամաբանութիւնը: Եթէ կ'առարկեն թէ սորվեցան Գ. Մալխասէն, որ նոյնիմաստ ցափրտութիւններ գրած էր, կ'ըսենք թէ ցամաք ջրհորի դիմեր են ջուր փնտռելու. ամէն փայլողը գոհար չէ. նա Կաթողիկէ մըն է որ չի գիտեր թէ ի՞նչ է Կաթողիկէութիւնը: Յոյց տան մեզի այս էֆաները թէ Հայ-Կաթողիկէ եկեղեցւոյ ո՞ր մէկ աղօթքը լքած թողուցած ենք. զանոնք իրենցմէ շատ աւելի անաւատ պահած ենք և ի պաշտօնէ կը կատար

րենք, զմայլելով անոնց վրայ. քանզի զանոնք իրենցմէ շատ աւելի աղէկ կը հասկընանք եւ Եւրոպայի ալ ծանօթացուցած ենք թարգմանութիւններով, մե'նք, Կաթողիկեայքս: Յասպարէզ կը կարդաւ Հայ էջմիածնականաց առհասարակ եկեղեցականները որ մրցումի մտնեն Հայ-Կաթողիկէ եկեղեցականաց հետ՝ օ. հ. Նարեկացւոյ ահաւոր հանճարին արտադրութիւնները հասկնալու եւ մեկնելու, իր ամէն աստուածաբանական վերացումներուն վսեմութեան, խորութեան, իր ամէն աստուածաշնչական մէջբերումներուն, խրթնաբանութեանց, անհուն սրլացումներուն, աննման թռիչներուն եւ դարձուածներուն, այդ դրախտային սոխակին հիւնալի ողբերուն վրայ... Թո՛ղ մրցին մեզի հետ, եթէ քա՛ջ են. Կաթողիկեայք են որ մեկնաբանեցին Հայ Հայրերը. Կաթողիկեայք են որ հրատարակեցին Հայ մատենագրութեան գանձերը. Կաթողիկեայք են որ ազատեցին Հայ Գրականութիւնը եւ Սըրբութիւնները, եւ եթէ ուրիշ եկեղեցւոյ մը մէջ կեղեցիկ ջերմոտանդութիւն մը կայ եւ առնունք ի՞նչ վնաս. բարւոյ մէջ՝ աւելին չի վնասեք: Մահաւանդ որ առ հասարակ Ս. Աւետարանէն քաղուած խօսքեր են այն աղօթքները, եւ ի՞նչ իրաւունքով պիտի պնդեն թէ հինէ մնացած ամեն բան բուն Հայկական է. ամենեւին ոչ. մեծաւ մասամբ Ասորական եւ Յունական է. պարզապէս փոխառութիւն է. նոյն իսկ Լատինականէն փոխառած է Հայը, յայտնի է Բահանայապետական Մաշտոցէն, Պատարագամատոյցէն, եւն. էջմիածնականք իսկ այսօր կը գործածեն այս տեսակ փոխառութիւնները: Արդէն աղօթքը, մանաւանդ առանձնականն ու անպաշտօնը, ազատ է: Կը հարցնեմ իրենց. Շնորհալիէն, Նարեկացիէն առաջ ի՞նչ կ'աղօթէին Հայերը...:

Ուրիմն անմտութիւն է այդ առաջարկեալ կաշկանդումը. բաւական է որ, աղօթեն՝ այդ խժժանքները բարդողներն, աղօթեն... ո՛չ լիզուն ո՛չ ձեւը կարեւորութիւն չունին յառանձնականին: Անմտութիւն է նոյն իսկ աղօթքը կապել ազգայնամոլու-

թեան: Օր մը էջմ. վարդապետ մը կը պնդէր թէ միայն Հայոց մեռնող վաւերական է, ուրիշ ազգերունը անվաւեր: Հարցուցի իրեն թէ ի՞նչ պատճառաւ: Պատասխանեց թէ՛ անոր համար որ Հայերը միայն ունին Ս. Գրքոր Լուսաւորչի Աջը, որ մեռնող վաւերական ընելու համար անհրաժեշտ էր. Ուստի, կ'ըսէր, ուրիշ ազգերու բոլոր Դրոշմները, Ձեռնադրութիւնները ոչինչ են: Այս յաւակնոտ տգէտին հարցուցի թէ Ս. Լուսաւորչին առաջ մեռնող չկա՞ր... կամ Ս. Լուսաւորչին դրոշմուելուն եւ ձեռնադրուելուն ժամանակ գործածուած մեռնող իր Աջո՛վն օրհնուած էր... — Չկրցաւ պատասխանել. բայց ցվերջ յամառաբար եւ յիմարաբար պնդեց իր կարծիքին վրայ:

Կը մնայ այդ պատմութիւնը մեր դէպքին յարմարցնել:

Ք Ա Ր Ո Չ

ՅԻՍՈՒՍԻ ԶԱՐԶԱՐԱՆԱՅ ՎՐԱՅ

(Շար.)

Բայց յառաջանա՛նք: Այսուհետեւ Յիսուսի առնելիք բոլոր քայլերը նորանոր նշաւակութիւններ պիտի ըլլան. ուստի երրորդ՝ մարդոց չարութիւնը կը լրանայ այսօր իր մահը պահանջող ժողովուրդին փոփոխամտութեամբ: Յիսուս հանուելով Կայիափայի ապարանքէն, ուր այնքան թշնամանալից եւ դառնաղէտ գիշեր մը անցուցեր էր, մտնում քահանայապետին պաշտօնեաներուն եւ ծառաներուն լրբութեան եւ վայրենութեան, նշաւակ եղած՝ միայնակ եւ գիշերն ի բուն, անարգանքներու՝ որոնց յիշատակը եւ եթ կը սոսկացնէ մեր հաւատքը եւ արցունք կը քամէ բարեպաշտներու աչքերէն. լքուած, թողուած իր բոլոր աշակերտներէն, ահաբեկ սպասելով ցորեկուան ուր բոլոր Նրուսաղէմի սուջեւ աւելի հանգիստաւոր կերպով պիտի վերսկսին իր նշաւակութիւնները, կը տարուի դատարան, նոյն ապաշնորհ եւ փոփոխամիտ քաղաքին փո-

ղոցներուն մէջէն . ետեւը ունենալով , իբրեւ չարագործ , խաժամուժ ամբոխ մը , որ զինք կը թշնամանէ : Ինչ փոփոխութիւն . դեռ քանի մը օր առաջ տեսանք իր Երուսաղէմ մօտեւր՝ ամբողջ ժողովուրդին կեցցէներու եւ ցնծութեան աղաղակներովը , եւ իբրեւ յաղթական Թագաւոր մը որ կու գայ իր պետութեան գլուխն անցնելու . այսօր ի՞նչ նորօրինակ երեւոյթ . ամօթապարտ , եւ նշաւակ անէծքին միեւնոյն յուզեալ ժողովուրդին որ իր մահը կը խնդրէ սոսկալի աղաղակներով : Կ'ուզէիր , Աստուած իմ , որ քու ծառաներդ սորվին , այս օրինակով , չվստահիլ աշխարհի փառքին եւ մարդոց այնքան յեղեղուկ եւ անհաստատ համարումին վրայ , եւ աւելի եւս չգոհել պարտքն ու խիղճը անոնց սնտոի դատողութեանց . եւ քեզի միայն յարիլ , որ կը տեսնես զմեզ ինչպէս որ ենք , եւ որուն դատաստանները կը մնան յաւիտեան :

Մինչեւ ո՛ր , արդարեւ , այս անգգամ ժողովուրդը կը հասցնէ իր ծայրայեղ թեթեւամտութիւնը եւ կուրուքիւնը . եւ ո՛րքան ոճիրներ կը գործէ մի միայն ոճիրով : 1. Անհեթեթ անիրաւութիւն մը . իրեն կ'առաջարկուի ազատ արձակումը Յիսուսի կամ երեւելի եղեռնագործի մը որ հրապարակական ոճիրներու համար մահուան դատապարտուած էր : Ինչ համեմատութիւն . մարդոց Փրկիչը՝ եղեռնագործի եւ մարգասպանի մը հետ . բայց եւ այնպէս Բարաբքան կը նախադասուի . եւ ա՛յն՝ հանրութեան ձայնով . քահանաներուն , ծերերուն , զպիւրներուն , խուռն բազմութեան կողմէ , անհաւատ դատաւորի մը ատենին մէջ . ամբողջ Հրէաստանի առջեւ , եւ Երուսաղէմ տեղի ունեցող դէպքերուն ամենէն նշանաւորին մէջ :

Ո՛հ , զմեզ խոնարհեցնող՝ ամենաթեթեւ նախապատուութիւնէ մը մենք այնքան դիւրաւ կը զգածուինք , մեր հպարտութիւնը այնքան ուժգին կը զայրանայ . եթէ քիչ մը մոռցուինք , եթէ քիչ մը մեր մրցակիցները եւ մեր հաւասարները բարձրանան , այլ եւս մարդոց անիրաւութեան մասին ի՞նչ ըսենք քիչ կը համարինք . կը պախարակենք մեր մեծերուն ընտրութիւնները . վար կը զարնենք

մեզմէ նախամեծար համարուողներուն արժանիքը : Սորվի՛նք Յիսուսէն որ մարդոց դատաստանները մեզի նկատմամբ իրական բան մը չեն սահմաներ . միայն Աստուծոյ համար եղած գործերը անվարձ չեն մնար . եթէ հայրենիքի մատուցած ծառայութիւններնու միակ դրդապատճառը՝ փառասիրութիւնն է եղած , արժան եւ իրաւ է որ մենք պատուհասուինք նոյն իսկ մեր փառասիրութեամբը . ճշմարիտ առաքինութիւնը չնորձերու արժանի ըլլալը աւելի կը մտածէ քան զանոնք ընդունիլը :

2. Կոյր կատաղութիւն մը : Հեթանոս ատենակալ մը չի համարձակիր առջի բերան աւելի յառաջ երթալ Յիսուսի դատապարտութեան մէջ . կը յայտարարէ թէ ինք անպարտ է այդ արդարին արիւնէն . եւ այն կատաղի ժողովուրդը կ'ուզէ որ անոր արիւնը իր եւ իր որդւոց վրայ ըլլայ . ան կը հաւանի , կ'ուզէ որ այս անէծքը մնայ յաւիտեանապէս իր սերունդին գլխուն վրայ . Արիւն դորա ի վերայ մեք եւ ի վերայ որդւոց մեքոց (Մատթ . Իէ . 25) . եւ դէպքերը կը համապատասխանեն իր կամքին . այսօր իսկ տիեզերքի նախատինքն եղած , թափառական , աստանդական , արհամարուած , առանց սեղանի , առանց տեղւոյ , առանց պատարագի կը կրեն ամէնուրեք իրենց ճակտին վրայ այս արեան հեղումին ոճիրը :

Այսպէս ահա՝ անիրաւ դատաստանները անէծքի աղբիւր կ'ըլլան ընտանեաց մէջ : Աստուած չորրորդ սերունդէն իսկ կ'ուզէ այն արիւնը , զոր յանգզնօրէն թափել տուած է իրեն նախնեաց մէջէն անիրաւ եւ այլոց կիրքերուն իսպառ անձնալիք ատենակալ մը . աներեւոյթ ձեռքէ մը կը հարուածուին այդ տունները , եւ իրենց անկումով ապշահար կ'ընեն աշխարհը , եւ մինչեւ վերջը ապագայ սերունդը կը կրէ ճակտին վրայ իր հայրերուն անօրէնութիւնը :

3. Սեւ ապերախտութիւն մը : Ատեն մը Յիսուսի բարի արարքներէն չարժած կ'ուզէին զինքը իրենց թագաւոր ընել . այսօր կը յայտարարեն բարձրաձայն թէ իրենք Կեսարէն ուրիշ թագաւոր չունին . կը մերժեն

Դաւիթի որդին, այն թագաւորը, որուն թագաւորութիւնը յաւիտեան պիտի տեւէ. և չեն ուզեր որ իրենց վրայ թագաւորէ. Ոչ կամիմք թագաւորել զմա ի վերայ մեր, (Ղկա. ԺԹ. 14.): Զի մեր թագաւոր բաց ի Կայսերէ (Յովհ. ԺԹ. 15.):

Այս չէ՞, եղբայրներ, դուք մանաւանդ որ կը բնակիք թագաւորաց պալատները, այս չէ՞ այն լեզուն որ կը բանեցնէք ամէն օր Աստուծոյ հետ ձեր սիրտին խորքը: Բանի՞ անգամ դադարաբար իրեն ըսած էք, իր սուրբ ազգեցութիւններուն ընդդիմանալով. դեռ չենք ուզեր որ մեր վրայ թագաւորես, դեռ ժամանակը չէ քեզի ծառայելու, հրաժարելու աշխարհէ և մեր խոտորումներէն. պէտք է սպասել աւելի յառաջացած հասակի մը. հիմայ եղանակն է առաջանալու, ձեռք բերելու մեզի պարտ ու պատշաճ դիրքերը. մենք չենք կրնար Կեսարէն, պալատէն, մեր շահէն ուրիշ Աստուծոյ ծառայել: Ահա՛, եղբայրներ, ձեր միակ աստուածութիւնը: Կրօնասէր իշխան մը կ'ուզէ որ Աստուած միայն իր վրայ թագաւորէ. անոր ոտքը կը դնէ իր մականը, թագը, իր պետութիւնը. այս բոլոր մեծարանքները միայն Աստուծոյ համար են. և ձեր բոլոր մեծարանքները իրեն իսկ կ'ընծայուին, զոնէ սորվեցէ՛ք արժանի ըլլալ իր շնորհքներուն հետեւելով իր օրինակին:

Զարբորդ՝ մարդոց չարութիւնը կը լրանայ նաեւ Պիղատոսի թուլութեամբ, որ հակառակ իր խղճմանքին, իր մտքի լոյսին՝ Յիսուսը անմեղ յայտարարելու չի համարձակիր. և նկատեցէ՛ք, կ'աղաչեմ, այս զեղծ ատենակալին ընթացքին մէջ, բոլոր շարժումները այն անարգ վատթարութեան, որ խիղճն ու պարտքը շահերու կը դնէ: 1. Գիտէ թէ իրեն չ'իյնար վճիռ արձակել Յիսուսի դէմ եղած ամբաստանութեանց վրայ, թէ ինք օրինաց անտեղեակ ըլլալուն՝ չի կրնար մանկ գործքի մը մէջ որ գրեթէ միայն Հրէից կրօնքին կը վերաբերի և որուն դատաստանը վերապահալ կը թուի միայն քահանայապետին: Սակայն Հրէից աւագներուն անհաճոյ չըլլալու համար, ինքզինքը կը

դնէ անձեռնհասօրէն և տգիտաբար դատելու վիճակի մը մէջ. տգիտաբար, որովհետեւ տեղեակ չէ օրինաց. և անձեռնհասօրէն, որովհետեւ Տէրը ատենակալները ճշմարտութեան և վարդապետութեան դատաւոր չէ ըրած. անոնց ատենը ապաստան և պաշտպան է Եկեղեցւոյ, բայց անոր կանոնն ու օրէնքը չէ. անոնց կ'իյնայ անոր ձեռնտու ըլլալ և ոչ թէ վճռատու, պատգամախօս. հաւատոյ աւանդը պահելու և անոր ստանալը կրցող մոլորութեանց դէմ կոռուելու հոգը թողելու են անոնց, որոնց Տէրը հաւատացեր է զայն:

2. Պիղատոսի չեն ըսեր թէ՛ Յիսուսը ազատ որ արձակես, անիրաւութիւն կ'ընես, քու ատենակալութեան պաշտօնդ անջնջլի կերպով կ'արատաւորես. այլ՝ Կայսեր բարեկամ պիտի չըլլաս. Եթէ զդա արձակես, չես բարեկամ Կայսեր (Յովհ. ԺԹ. 12): Զինք չեն վախճներ արդարութեան տէսակէտով որ իր վրայ այնքան ազդեցութիւն չընեն. այլ իր շահերուն տէսակէտով որ իրեն աւելի սիրելի են քան արդարութիւնը: Պաշտօնէի մը համար յառապիական և շահախնդրական դիտումներէ վնասակար բան չկայ. այնպիսին օրինաց պաշտպան չէ այնուհետեւ. այլ լոկ պաշտօնեայ մարդկային կրից եւ մարդիկ անգամ մը որ իր տկար կողմը հասկնան, այլ եւս տէր կ'ըլլան իր իշխանութեան եւ ազգեցութեան:

3. Պիղատոս տեղեկութիւն կ'առնու Հրեաներէն, այսինքն Փրկչին յայտնի թշնամիներէն. ինչ յանցանք կը դնեն վրան: Անգգա՛մ ժողովուրդ, կրնայիր պատասխանել որ ան կոյրերուն աչքը բացեր է, անդամաւորները բժշկեր է, կաղերը ուղիղ քալեցուցեր է, Խորայէլի որդւոց փրկութիւն աւետարաններ է, եւ կեանքը բարիք ընելով անցուցեր է: Կ'ամբաստանեն զինքը իրրեւ թէ ուզած է խռովութիւն հանել ժողովրդեան մէջ եւ թագաւոր ըլլալու ձեռնամուխ է եղեր. որովհետեւ անմեղը, որուն մահը կը խնդրուի, պետութեան թշնամի է. եւ հոս ոճիրի չգոյութեան պատճառաւ ամբաստանութիւնը բաւական է: Երկարներ, ո՛ւր են

Մարիամու Որդւոյն զէնքերն ու ճոխութիւնները՝ այդպիսի յանդուգն ձեռնարկ մը զեկամարելու համար. Այդ մարդուն, որ գրլուխը դնելիք տեղ մը չունի (Մտթ. Ը. 20), եւ որ չի մարեր առկայծեալ պատրոյգը (Եսայի ԽԲ. 3): Ուստի Պիղատոս այս ամբաստանութեանց մէջ չի տեսներ եթէ ոչ անիմաստ, ժողովրդային աղաղակներ, քան լուրջ վկայութիւններ. բայց իր շահերը կ'ուզէ ապահովել անմեղի մը վնասով, եւ ինք իր մէջ կը վճռէ Կայիափայի պէս թէ՛ աւելի լաւ է որ արդար մը մեռնի քան, իր վարչութեան օրովը, բոլոր ազգը Կեսարէն ապստամբի: Ո՛րքան ողբալի է այն կացութիւնը ուր հարկ է մարդուս ընտրութիւն ընել իր շահուն եւ իր խիղճին միջեւ. շատ հազուադէպ է որ մարդս այս փափուկ պարագաներուն մէջ չտկարանայ. արդարութեան սէրը մեր անձին սիրոյն վրայ գրեթէ ընաւ գերակշռութիւն չունի. ուղղամտութեան համարը կը սիրենք. բայց չենք ուզեր անոր համար դժուարութիւն կրել. այն ասեն մենք մեղի պատուականեր կը յերկրենք, Պիղատոսի պէս, մեր տկարութիւնը մեզմէ ծածկելու համար. բաւական է որ մենք չըլլանք բուն առաջին պատճառը հարստահարութեան, անոր ձեռնտու ըլլալինս ոչինչ կը համարինք. եւ արդարութիւնը՝ մեր վրայ շատ ակար իրաւունքներ կ'ունենայ երբ մեր շահերուն հակառակի:

4. Յիսուս կը հարցաքննուի այդ անհաւատ ատենակալէն. Դուն թագաւոր ես, կը հարցնէ ան. Թագաւոր ո՞ւմն ես դու. եւ Փրկիչը անոր կը պատասխանէ որ իր քաղաքութիւնը այս աշխարհէս (Յովհ. ԺԸ. 36): Եւ սակայն ինք Յուդայի թագաւորներու ցեղէն սերած է, եւ օրինաւոր ժառանգ է Դաւթի աթոռին. բայց կ'ուզէր հրահանգել աշխարհի թագաւորներն ու մեծերը եւ իրենց սորվեցնել թէ իրենց իշխանութիւնն ու իրենց իրական մեծութիւնը աս աշխարհէս չեն. թէ իրենց թագը երկինքն է. թէ աշխարհի վրայ լոկ թատերական թագաւոր մը եղած պիտի ըլլան, իրենց կեանքին կարճ ու վաղանցուկ տեւողութեան մի-

ջոցին, եթէ իր ատենը չելլեն ճոխացած արդարութեամբ եւ բարեպաշտութեամբ ուրոնք միայն կրնան զիրենք թագաւորեցնել յաւիտեանս յաւիտենից. թէ հոս զիրենք ուրիշ մարդոցմէ վանազանող ամէն տիտղոսներ, իրենց հետ պիտի կորսուին, եւ թէ այն ատեն ահեղ դատաւորին առջեւ, ուր պիտի երեւնան իբրեւ ոճրագործ, եւ մերկ ու թափուր զիրենք այժմ շրջապատող վաղանցուկ փառքէն, իրենց պիտի հարցուի ինչպէս Պիղատոս կը հարցնէ այսօր Յիսուսի. Թագաւոր ո՞ւմն ես դու. դուն թագաւոր ես: Գեղի չի հարցուիր թէ ազնուական ցեղէ՛ ես. թէ աշխարհի մէջ մեծ պաշտօններ վարե՛ր ես. թէ բանականութեամբ մանատար եւ նահանգներու եւ պետութիւններու իշխա՛ծ ես. այդ ամէնը այլեւս չկայ. այդ ամէնը լոկ մնտի դարդ մըն էր, անցաւոր տեսարան մը, եւ մեծ ու փայլուն կ'երեւար միայն անոնց որ իրենց զգայարաններուն պատրանքին ենթարկուած էին, որ ժամանակը յաւիտենականութեան հետ կը չփոխէին եւ միայն սին երեւոյթներու համեմատ կը դատէին: Բայց դուն մեծ ես իմ եւ իմ ընտրեալներուս առջեւ. Թագաւոր ո՞ւմն ես դու. հոս ի՞նչ ունիս որ զքեզ ուրիշ մարդոցմէ կ'որոշէ. թագաւորեցի՛ր, իշխեցի՛ր քու անկարգ կիրքերուդ վրայ. յաղթեցի՛ր դուն քեզի. ուրիշ մարդոցմէ այնչափ գերիվերոյ եղա՛ր վարքիդ անմեղութեամբը, հաւատքիդ հաստատութեամբը. ինչպէս էիր պաշտօնիդ բարձրութեամբը. կիրքերդ որ միշտ ծայրայեղ էին, քանի որ քու բարձր գիրքիդ մէջ, խօլ բաղձանքներէդ ուրիշ սանձ չունէին, զքեզ իմ առջեւ խառնիճաղանձէն աւելի ստորնացուցեր չե՞ն. ոճիրներու եւ խայտառակութիւններու տարրերութենէն զատ ճանչցուելու նշան մը ունի՛ս այս տեղ. Թագաւոր ո՞ւմն ես դու: Ո՛հ ա՛յն ատեն շատ մեծամեծներ ամօթահար ըլլալով պիտի խոստովանին թէ իրենց թագաւորութիւնը այս աշխարհէն էր միայն. թէ իրենք յաւիտենականութեան մէջ աւելի ամօթապարտ եւ թշուառ ըլլալու համար միայն՝ ժամանակի մէջ մեծ եղած

են . թէ իրենց համար աշխարհի հետ ամէն ինչ լինցաւ . եւ թէ բոլոր ունեցածնէն ուրիշ բան չէ մնացած իրենց եթէ ոչ զանոնք չարաչար գործածած ըլլալնուն յաւիտենական յուսահատութիւնը :

Սակայն այս ամէն ճշմարտութիւնները Պիղատոսը կը զարմացնեն բայց չեն փոխեր : Փրկիչը քիչ առաջ անոր ծանուցած էր թէ ճշմարտութեան պատկանողները միայն իր ձայնը կը լսեն , թէ ունայնութիւն եւ սրտութիւն սիրողները իր վարդապետութիւնը բնաւ չեն հասկնար . թէ իր սկզբանց սրբութիւնն ու վսեմութիւնը ըմբռնելու համար , պէտք է սիրել , եւ թէ միայն ճշմարտութեան սէրը անոր վերահասու կ'ընէ : Ի՞նչ է ճշմարտութիւնը , կը պատասխանէ իրեն այդ անհաւատ ատենակալը . ԶԻ՞նչ է նեմարսութիւնը . (Անդ 38) , եւ պատասխանին իսկ չսպասելով , մեզի կը հասկցնէ թէ մեծերէն շատերը քիչ անգամ ետեւէ կ'ըլլան ճշմարտութիւնը ճանչնալու . թէ այս մասին անոնց ըսած խօսքերը յաւէտ ունայնարարութիւն են քան սորվելու բաղձանքի արտայայտութիւն . թէ երբեմն խորհուրդ ալ որ հարցնեն՝ աւելի իրենց կրից հաւանողներ փնտռելու քան պարտքերնին ճանչնալու համար է : Թէ զժպէի ճշմարտութիւնները՝ իրենց քով չեն հասնիր . որովհետեւ իրենց անհաճոյ ըլլալու համարձակելու չափ ոչ ոք զիրենք կը սիրէ . եւ թէ զիրենք խաբողները վարձատրելնուն համար արժանի են խաբուելու :

Յիսուսի տուած պատասխաններուն մէջ փայլած այսքան նորորինակ սրբութիւնն ու մեծութիւնը՝ Պիղատոսին սիրտը կը շարժեն , միտքը կը յուզեն . ժողովուրդին կը յայտարարէ թէ այս մարդը յանցաւոր չէ . բայց անմեղը ազատ չ'արձակել . կը շատանայ խնդրելով որ զանիկայ արձակեն , կամ զինքը ազատեն զանիկայ դատապարտելէ . միշտ տարուբեր պարտքի եւ չահու միջեւ , միշտ ուղեով չհակառակել ո'չ արդարութեան եւ ոչ կիրքի : Բայց երբ խնդիրը պարտականութեան վրայ է ամէն իրաւաստողութիւն երկեղալի է . ամէն բան հաշտեցնելու զգուշացնելու ,

ամէն բան կորսնցնել է . մեղմիչ միջոցներ հնարել , երբ օրէնքը մէկին եւ որոշ է , կանոնը յարգել չէ , այլ՝ մեր կիրքերը գոհացրնել . սուտին եւ ճշմարտութեան միջեւ ամէն միաբանութիւն միշտ ճշմարտութեան վնասով կ'ըլլայ , եւ մահաւանդ Աւետարանը Վարդապետութիւն մըն է որ կ'առաջարկէ կանոններ եւ ոչ թէ հնարքներ :

Ի վերջոյ , հուսկ յետին , անիրաւ ձեռնարկ Պիղատոսի : Իր կնոջ անուրջէն եւս զարհուրած կը մտաբերէ Յիսուսը Հերովդէսին զրկել , պատճառելով թէ , Փրկիչը ըստ որում Գալիլացի , այդ իշխանէն դատուելու է : Բայց եթէ ինքը անպարտ կը գտնէ , ինչո՞ւ կը զրկէ ուրիշի մը , որ թերեւս զայն դատապարտէ , առանց առաջուց իրեն իմացնելու անոր անմեղութիւնը : Հերովդէս զանիկայ կ'ընդունի իր պալատին մէջ . բայց Յիսուս հոն իր վարդապետութեան պաշտպաններ եւ կողմնակիցներ գտնելու ակնկալութիւն չի կրնար ունենալ : Յիսուս կը լռէ , չի գովեր Հերովդէսը , չի դրուատեր անոր պալատին շքեղութիւնը , անոր բաղմամբէլ յաղթութիւնները , անոր թագաւորութեան բարգաւաճութիւնը , եւ կ'արհամարհուի : Մեծերը կ'ուզեն գովուիլ , արհամարհանք կը համարին անկեղծութիւնը որ չի համարձակիր իրենց սուտ գովեստներ տալ . եւ եթէ երբեմն բարեպաշտութեան սէր եւ պաշտպանութիւն ցոյց կու տան , յաճախ կը սիրեն միայն բարի մարդոց առաքելութեան տկար կողմը , այսինքն անոնց մարդահաճութիւնն ու կամարարութիւնը : Հերովդէս Յիսուսէն կը սպասէ նորանշան հրաշքներ . եւ այս յուսով ուրախութեամբ կը տեսնէ անոր հասնիլը . ասիկայ անոր վարդապետութենէն օգտուելու համար չէ , այլ լոկ նորորինակ բաներով զբօսնելու համար . որովհետեւ իշխանները եւ մեծերը շատ շատ կրօնք իրենք իրենց զուարճալի տեսարան մը կը նկատեն եւ ոչ թէ զիրենք զբաղեցնող լուրջ գործք մը : Սակայն չկարենալով անոր բերնէն խօսք մը անգամ առնուլ , կը հագցնէ անոր , իբր յիմարի , սպիտակ զգեստ մը . եւ այս ամօթալի կերպարանքով , ամբողջ բանակի մը ծաղրին



ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆ ԵՐԱՆԵԼԻՈՅՆ Տ. ԿՈՄԻՏԱՍԱՅ

Ըղնօրինակութիւն Անկիւրիոյ Ս. Կղեմէս Եկեղեցւոյն մէջ
պահուած հին պատկերին:

ու նախատինքին նշաւակ, Յիսուս կը տար-
ուի նորէն Պիղատոսին: Հերովդէսի պալա-
տէն կ'ելլէ առանց հրաշք գործելու, առանց
զարձ մը ընելու, առանց ինքզինքը ճանչցը-
նելու: Հասարակօրէն պալատը Յիսուսի յաղ-
թանակներուն աեղը չէ. հոն իր սկզբունք-
ներուն ծաղրական հանգամանք մը կը տրուի.
վայրապա՛ր մեծ օրինակ մը անոնց ուժ կու
տայ. մոլութիւնը հոն աւելի զգուշաւոր է.
սակայն ճշմարիտ առաքինութիւնը շատ հե-
տեւող չունի:

ՏԷՐ ԿՈՄԻՏԱՍ ՔԱՀԱՆԱՅ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՆԱՀԱՍԱԿ

Թ

ԱՆԹՈՒԱՄ ԲՐԱՐԻՈՆԸ

(Շար.)

Յանկարծ դահիճը Տէր Կոմիտասի վրայ
յարձակելով ձեռքերը ետեւէն կապեց ու աս-
տիճաններէն վար կ'իջեցնէր զայն, երբ Ե-
պարքոսը ակնարկով մը դահճապետը իւր
մօտ կանչեց և ականջը փսփսաց ըսելով.
«Քեզ տեսնեմ, աշխատէ՛ որ մեր կրօնքը դա-
ւանի. ու քեզ լիովին կը վարձաւորեմ. (Ե-
ղիազ. Անկ. և Մաղաք. Ճէվահ. եյն. :.)
Դահճապետը՝ դահճին նշան մը բրաւ, և դա-
հիճը ասոր վրայ քաջալիրուած կրցածին չտի
փախկութեամբ Տէր Կոմիտասը Եպարքոսա-
րանէ դուրս հանելով, մինչ Ալայ կամ Սալ-
քանաք fkoef)ին մօտեցան. այսինքն Ար-
քայական պալատի՝ որմերու առջև ուր սո-
վոր էր Արքայն պատուհանէն դիտել, և այն
ատենուան Թագաւորն էր Սուլթան Ահմէտ
Գ. որ 1703ին գահակալութեան առաջին օրը
բանտարկելոց ընդհանուր ազատութիւն հը-
րամայած ըլլալով, կրօնական խնդրոյ համար
բանտի մէջ գտնուող բոլոր Կաթողիկէ Հայի-
րուն մեծ ուրախութիւն եղած էր. — դահիճը
Տէր Կոմիտասի հրամայեց որ հոն ծնրադրէ և

պատրաստէ սուրին իւր պարանոցը: Տէր
Կոմիտասը իսկոյն համակերպեցաւ, և առ-
ժամայն դահճապետը Տէր Կոմիտասին ստջեւ
ի ծունր իջեալ Յուդայի պէս անսուրբ չըր-
թամբ անոր մօրուքը համբուրեց ու գփսա-
յին թելադրութեամբ հրապուրել սկսաւ. «Ե-
կո՛ւր սիրելիս, դեռ հազիւ յիսուն տարեկան
ես, մեզք է քեզ որդւոց ու դստերաց տէր
ես, վրադ կը գթամ ընդունէ՛ մեր կրօնքը,
որ ազատիս. ահա ձեր մեծ Կաթողիկոսն ալ
տաճկացաւ, ու մեծ պարպեւեներու և պա-
տիւններու կ'արժանանաս», ըսաւ. բայց Երա-
նելին և ո՛չ բառ մը արտասանեց, որովհե-
տեւ զբաղած էր եռանդեամբ «Երանեալ են
ամբիժք» (Սաղմ. 118) սաղմոսը քաղելու,
երբ աւարտեցաւ գլուխը վերցնելով ըսաւ
դահճապետին «Ես Բրիտանիայ եմ, և Աս-
տուծոյ ծառայ, և իմ կրօնքս չեմ ուզեր ու-
րանալ. եթէ զիս մաս մաս կտրո՞ւք, կարելի
չպիտի ըլլայ այդ բանը. (Էզիկիէր հաւամ spur)
ի զուր մի նեղեր զիս. ինչ որ քեզ հրամայ-
ուած է ան կատարէ՛:» Որուն վրայ դահիճը
զինքն այն վայրէն վեր առնելով ճամբայ ե-
լաւ:

Թափօրը, կամ թէ յուզարկաւորութեան
հանդիսական կազմակերպութիւնը. ըստ ինք-
եան պատրաստուած էր, առջեւէն առանց
անդրադառնալով թէ սոյն հանդէսը ի՛նչ նը-
պատակ ունէր, կարգ մը փոքրահասակ տը-
ղաք կը վազվառէին, ետեւէն Տէր Կոմիտաս
Բահանայն և երկուս — ոմանք երեք կը յի-
շատակեն — աշխարհիկ դասակարգէ Յարու-
թիւն և Զաքարիա ուղղափառ մահապարտք
ձեռքերնին ետեւէն կապուած, չըջապատ-
ուած կարգ մը վարդաւորներէ և դահիճէն
ու դահճապետէն, և ետեւէն քաղմաթիւ
խուռն յուզարկաւորներ ամէն ազգէ և
կրօնքէ սգաւոր և գլխակոր. միայն թշնամի
եկեղեցականք էին որ իրենց լիրբ ուրախու-
թիւնը չէին կրնար զսպել, կարծես վագրի
սիրտ ունէին: Սողուգ-Չեւիկ կոչուած գոնէն
դուրս ելան, որ հիմայ «Էմին-Էօնիւ»է վեր
ելլող Թրամվէյի գիծերուն կը հանդիպի, ան-
ցան Սուլթան Ահմէտի դա Բասնի առջեւէն և
Զէմպէրլի-Թաշի ճամբան ուղղուեցան: Այս

ճամբուրն վրայ երկու նշանաւոր հանդիպումներ պատահեցան ինչպէս մեր պատմիչը մանրամասնութիւններով մեզ ատնողած են՝ Նախ՝ Ֆէնէրի կողմէն, այսինքն Յունաց պատրիարքարանէն՝ իրենց Պատրիարքին մէկ կարեւոր խնդրոյն նկատմամբ մի քանի Քահանաներ Եպարքոսարան կու գային իրենց խնդիրովը զբաղած։ Երբ մեր ամբօխը տեսան, և արդէն լսած ըլլալով Տէր Կոմիտասի համբաւը, իրեն մօտեցան յունական մեծ յարգանք, և իրենք զիրենք անոր ազօթից և բարեխօսութեան յանձնարարեցին (Տեղեկ. Ֆէրեօլ Դեսպ.)։ Իսկ Երանելին, իր մասին ներողութիւն խնդրելով խոնարհաբար անոնց ազօթից և օրհնութեան յանձնարարեց զինք՝ «Ընդհակառակը ես Ձեր օրհնութեան և ազօթից կարօտ եմ, որովհետեւ մեռնելու կ'երթամ» ըսելով։ Ճամբան շարունակեցին, յանկարծ երկու կանայք թաւորին յառաջացման արգելք եղան։ Ասոնցմէ առաջինը Տէր Կոմիտաս Քահանային բարեպաշտ և քաջասիրտ երէցկիւնը Մարիամն էր. որ, ինչպէս երբեմն երանուհին Անաուօլա զսուրբ Աղբիւսն իւր ամուսինը, կը յորդորէր զինքն, իւր հաւատքին վրայ հաստատուն մնալ, ու բնաւ չհոգալ ոչ զինք և ոչ զաւակները. որուն Տէր Կոմիտաս քաղցր ժըպիտով մը պատասխանեց։ Իսկ միւսն էր Իրէնէ քոյրը, որ բնական ազդեցութեան տակ ամէն բան մոռցած, սատանայական թելադրութեամբ զինուած մազերը կը փետտէր, կը հառաչէր, և կը հրապուրէր եղբայրն որ ի սէր իւր ընտանիքին առ երեսս գէթ ուրանայ, ազատի միանգամայն ստոյգ մահէն և ապա նորէն ինչ կ'ուզէ ան ընէ։ Բայց անյաղթ նահատակն Քրիստոսի Հոգւոյն Սրբոյ շնորհօքն չյաղթահարեցաւ բանասրկուին նենգութիւններէն, մերժեց սաստկաբար և յանդիմանեց իր քոյրը սուրբ սրտմտութեամբ ի շինութիւն անհամար հանդիսականներու։

Այն երկայն ճամբուն վրայ Տէր Կոմիտաս շարունակ այլ և այլ ազօթքներով կը զբաղէր, ապա սկսաւ Յովհաննու Աւետարանչին առաջին գլուխը «Ի սկզբանէ էր բանն»։ Երբ թափօրը Բարմազ-Գարու հասաւ, Երա-

նելին հասած էր Աւետարանին եւ տեսաւ զփառս նորա զփառս իբրեւ զՄիածնի առ ի Հօրէ լի շնորհօք եւ նշանաւորեամբ խօսքերուն։ Այս խօսքերը լմնցնելուն պէս, դարձաւ իւր երկու ընկերներուն և զանոնք քաջալերել սկսաւ վերջին անգամ մըն ալ և յորդորել որ իրենց հաւատքին մէջ անսասն մնան մինչեւ ցկերջ Փրկչին ձեռքէն ընդունելու համար յարքայութեան երկնից անթառամ պսակը, և յարեց. «Ահաւասիկ ես յառաջ կ'անցնիմ ձեզ օրինակ տալու համար»։

Ընթերցողք պիտի յիշեն թէ այդ պարագաներու տակ մի քանի խորհրդաւոր, և այն ընդարձակ հրապարակի մէջ հոծ բազմութեան խոնուէն շատ մօտ գտնուողներու կողմանէ միայն լսուած, խօսքեր և ձեւեր կային, զորս իր տեղը չնշանակելով լռութեամբ անցած էինք։ Հիմայ կարգն է որ լռութեան ենք։

Սրգ՝ Երանելին Տէր Կոմիտաս, երբ Բարմազ-Գարուի հրապարակը հասաւ, հոն ինչպէս նկարագրեցինք իւր ընկերներէն բաժնուելով, որոշեալ տեղ մը, ոտքերովը՝ ծունկի վրայ գալիք տեղը խաչի նշան գծելով ծնրադրած էր, և երեսը դէպի արեւելք դարձուցած։ Դահլիճը կիսով չափ ծնելով դէպ ի Երանելին, բառ մը արտասանած էր, որուն՝ Երանելին պուլար թեթեւ կերպով ցնցելով շրթունքները շարժած էր. այս էր՝ թէ դահլիճը կ'ուզէր և կը հրամայէր թէ դէմքն դարձնէր դէպ ի հարաւ (Գրպլի) որուն Երանելին պատասխանած էր թէ «Իմ հարաւս այս է»։ ապա դահճագիւղը մտնելով, սիրալիր կերպիւ մի քանի վայրկեան խօսքի փոխանակութիւն ունեցած էին. և այս ուրիշ բան չէր եթէ ոչ՝ ինչպէս մօտ եղողները բացառյալ կերպով կրցան լսել, դահճագիւղին իր անձին նկատմամբ առիթէ մը օգտուելու ճիգն էր, ո'չ թէ քարացած որովհետեւ ամենափոքր գութէն, որով կը թելադրէր Երանելոյն՝ ուշ բանալ իւր Ս. Կրօնքը, դաւանելով (Սեղավիթ) Մուհամմետական կրօնքը։ Որուն Երանելին պատասխանած էր թէ, եթէ իւր մարմինը բիւր կտոր ալ ընեն, չպիտի

ուրանար զՏէր Յիսուս Բրիստոս : Ասկից ետ-
քը երանելին Տէր Կոմիտաս սկսած էր ջեր-
մեռանդութեամբ «Հայր մեր և Ողջոյն» ա-
ղօթքները և «Հաւատամք»ը : Երբ, ասոր
հազիւ թէ կէսին հասած, մահաբեր սուրին
օդին մէջ փայլելը և Ս. Գլխոյն թաւաղլոր
գետինը ինչպէս մէկ եղած էր :—

Ո՛հ Քահանայական Ս. արիւն. ո՛հ զը-
ժոխային յաղթանակ. ո՛հ Բարմաք-Գաբու,
որ տեսարան եղար Մեծ Նահատակին աներ-
կիւղ և փառաւոր վկայութեան, որ մշտա-
տեւ օրինակ պիտի ըլլայ բարիներու և չա-
րերու յանդիմանութիւն :

Այն սուրբ մարմինը, ինչպէս որ ինկաւ,
մնաց գետնի վրայ տարածուած երեք օր չա-
րունակ, ըստ տրամադրութեան տաճկական
օրինաց :

Բազմութիւնը հետզհետէ ցրուել սկսաւ
սարսափի ու ահ ու զոզի մէջ : Եղբայրասպան
Քահանաներուն սիրտն անգամ՝ որ ժամ
առաջ վրէժխնդրութեան ուրախութենէն կը
տրոփէր, յուսահատութեան ալեաց մէջ տա-
տանիլ սկսած էր Կայէնի պէս : Իրենց կոյր
աջօք գործած չարիքին ծանրութիւնը՝ կու
գար հիմայ զիրենք ճնշել իւր արհաւիրքով,
հալածել և մտրակել աներեւոյթ ձեռքը հապ-
ճեպ փախուստ տալու այն վայրէն, ուր պահ
մը առաջ կրից յագուրդ տալու համար ար-
ձանացած կեցած էին : Քնացէ՛ք այսուհետեւ
ձեր որջերուն ապաստանեցէ՛ք լեցնելու չա-
փը յետամնաց վայրագութեանց, թոյնը թա-
փելու քստմնելի շուայտութեանց որ թերեւս
ծածկուած մնացած են ձեր հրէշային սըր-
տերուն մռայլապատ խորշերուն մէջ, քա-
հանայք բէշիարայ, և ապահով եղէ՛ք թէ
Աստուածային Արդարութեան ամենակարող
բազուկը ձեզ, ձեր պետին և ձեզի նման
մարդկութեան վագրներուն արժանի պատի-
ժը չպիտի ուշացնէ :

(Շարունակելի)

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

(ԳՈՒՄ-ԳԱՐՈՒԻ ԱԶՔԻՆ ՓՈԽԵԸ)

Այս յօդուածը կ'արտաստէ իւրերորդի «Առաջաւիդ»
ամսաթերթէն, որ փոքրաւ կը շարունակէ իր ճառ-սե-
րուաւորելու աշխատելով նաեւ ուրիշներ : Մեզիս,—
Իրեւ Մեծ-Եղբայր,— ոչ միայն խախտյալ, այլ և
խորհուրդ կ'ուզէ իր կորովին և աշխատասիրութեան
վայել խոնարհութիւն : Մեր ամենուն միարան ձեռնա-
աշխուժով «Բրիստոս Բարոցեցի», և շատ խի է. ու-
ղիղ դիտարարեալ, քաղի կամփի եւ ի փառս Աս-
տուծոյ եղած անխնայ աշխատեալն իմ մարդկային
քերութիւնի իրեւ շիւղիւր կը մնան զորս կ'այրէ Աստու-
ծոյ ողորմութիւնը և սիրով և արդիւնեւ կը փոխա-
նակէ :

Երբ մէկը կրից գերի է գնացած և
սիրտը իր խաղաղ հանգստութիւնը կորսն-
ցնելով՝ խռոված է խստաշունչ հովերէ, այն
ատեն իր դատողութեանց մէջ՝ խոտորումնե-
րու կ'ենթարկուի, վասնզի կրից հոտանքէն
լանականութիւնը մթապնած և տրամաբա-
նութիւնը խանգարուած է : Ասոր իբր գործ-
նական մէկ օրինակը կը տեսնենք, Արշակ
Ա. Այլօյաճեանի վրայ, որ՝ 1912 Դեկտ.
10, 23 թիւ Բիւլանդիոնի մէջ, երեք սիւ-
նակի վրայ, իր ներքին զգացմանց պատկե-
րացումը կ'ընէ : Լու՛ս կեցէ՛ք ու ներշնչեալ
ազատականին մտի՛կ ըրէ՛ք :

Նա՛ ջնորական յառաջաքանի՛ մը ետքը՝
կը սկսի իր Փիլիպպականը Ամենապատիւ
Թերզեան Կաթողիկոսին դէմ. և սուր հե-
տեւեալ յայտարարութիւնը կ'ընէ :

1. — Ամէն մարդ կը կարծէր թէ Թեր-
զեան իր ժողովուրդէն և Օսմանեան կառա-
վարութենէն այնքան անարգօրէն մերժուե-
լէն յետոյ պիտի թողուր իր պաշտօնը և այլ
եւս չպիտի յամառէր իր ձախող և քննադա-
տելի ուղղութեան վրայ : Սակայն Թերզեան
անուղղայ է և կը յարատեւէ իր կամակո-
րութեան մէջ :— Կը բաւէ՛. կեցի՛ր քիչ
մ'ալ ևս խօսիմ :

Նախ՝ պէտք չէր որ ամեն բառը գործա-
ծէիր, որովհետեւ քու նպատակիդ ծառայող
և ո՛չ իսկ բարոյական ընդհանրութիւն մը կը
տեսնես Կաթողիկէ հասարակութեանս մէջ.
Իսկ թէ որ ամեն ըսելով կը հաւկնաս բոլոր

էջմիածականները, ատոր ալ կը տարակուսիմ, որովհետեւ ուղղամիտ և աւելի խելօք կրօնակիցներդ՝ համամիտ չեն քեզի. կը մնայ որ ամեն բառով հասկնանք հոս՝ ընդհանրապէս անկրօն, անաստուած, ըմբոստ և անիշխանական կուսակցամոլները՝ որոնց երազած գաղափարականն է կղերականութիւնը ստորնացնել և կաշկանդել զիւսէնար ազատականութեան աշխարհականացման շղթաներով. ատոնք այնպիսի էակներ են որ Աստուածային օրէնքները, և պատուէրները ոտնակոխելու և ամենէն նուիրական սրբութիւնները հայտելու համար՝ կարծես ծնած են: Ուստի եղբակացութիւնս սա է թէ, այդ կտորը լաւ չէ շարադրուած:—Իսկ ո՞վ է այն ժողովուրդը որ Թէրզեանի ժողովուրդը ըլլալով կը մերժէ զայն՝ իբր պոլիս ճանչնալ, և որով իշխանութեամբ, Կաթողիկէ Եկեղեցւոյ պատկանող ամէն անհատ Առաքելոյն ըսածը լաւ ըմբռնած է թէ «Ամենայն իշխանութիւն ի վերուստ է», և ոչ թէ ժողովրդենէն. հետեւաբար՝ եթէ գոնուին Կաթողիկէներ, որ ուզեն հետեւիլ ռամկավարական սկզբանց և դարուս անսանձ ազատականութեան, նովին գործով արդէն ուրացած կ'ըլլան իրենց Կաթողիկէ կրօնքը: Ով որ ճշմարիտ Կաթողիկէ է, կը հնազանդի իրեն ճշմարիտ հովուին, որ այժմ է Թերզեան Ամենապատիւ Կաթողիկոսը, իսկ ով որ կ'անսաստէ անոր հրամաններուն, կը դադրի անոր ժողովուրդին ըլլալէ որովհետեւ կը զադրի Կաթողիկէ Եկեղեցւոյ զաւակ ըլլալէ, մանաւանդ երբ բանադրանքի սարսափելի դատակնքոյն ներքեւ կը գտնուի: Ուստի, «Թէրզեան իր ժողովուրդէն... այնքան անարգօրէն մերժուելէն յետոյ» բացատրութիւնը ուղիղ չէ, վասնզի Թերզեան Կաթողիկոսին դէմ եղած անարգանքներուն միջերանոցը անսանձ ազատականներուն քով է. և քիչ են անոնք որ Կաթողիկէ սկզբունքները զոհելով անոնց զինակցեր են, մէկ անգամ մը խարուելով անոնց հրապոյրներէն. և յուսանք Աստուծոյ շնորհիւ անոնք ալ յիշեն իրենց հօրենական բնակարանը՝ եւ վերադառնան: Այս ըսածներէս կը հետեւի թէ Թէրզեանի բռնած ուղ-

ղութիւնը միայն էջմիածնականաց ձախող ու քննադատելի է, որովհետեւ չստնակոխեց նա կրօնքը զուտ չոր ազգայնականութեան հետեւելու համար, այլ գիտցաւ կրօնք եւ ազգութիւն իրենց տեղովը փայլեցնել իր վրան. իսկ մեր հասարակութեան նա քաջ հովիւ մը հանդիսացաւ, ծափահարութեանց ու կեցցէներու արժանի: Ուստի սխալ է նաեւ սա բացատրութիւնը. «Սակայն Թէրզեան անուղղայ է»: Վասնզի ինքզինքը պէտք է ուղղելու ետեւէ ինչայ անիկա՝ որ սխալած է եւ թիւր չաղէ կը քալէ, եւ ոչ թէ անիկա՝ որ իր նուիրական պարտականութիւնը կը կատարէ ամենայն խղճի մտօք:

Բ.

(Շարունակելի)

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՏՕՆԱՑՈՅՑ

Մարտ 16	† Կիր.	ակ. Ծաղկազարդ
17	Աւագ Բշ.	քծ.
18	» Դշ.	րկ.
19	» Դշ.	գծ.
20	» Եշ.	գկ.
21	» Ուրբ.	դծ.
22	» Շր.	դկ.

Ս. ԹՈՎՄԱՍ ԱԳՈՒԻՆԱՑԻ,
ՀՐԵՇՏԱԿԱՅԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ

(Շար.)

Ահա այսպէսով միջթարուեցաւ նա՝ այն երկու տարի տեւող ճշմարիտ մարտիրոսութեան ժամանակ զոր իւր ընտանիքը իրեն կրէ, տուաւ այդ գղեակին մէջ արգելափակուած: Նոյնպէս երբեմն գաղտնադի կ'ողջելէր իրեն Հ. Յուլիանոս, որ բերաւ իրեն Ս. Գրիգորիոսի հազուստը և այլեւայլ գրքեր: Վերջապէս իր մայրը, զաւակին գիտաւորութիւնը փոխելէն յուսահատելով, սկսաւ մեղմանալ և առանց ամենեւին հասկնելու թոյլ տուաւ որ անոր երկու քոյրերը զինքը փախցնեն պատուհանէ մը: Իր կրօնաւոր ընկերները, որոնց նախապէս գաղտնի լուր տրուած էր, եկան ընդունելու զինքը՝ իբր երկնառաք հրեշտակ մը:

Կառքով ուղարկուեցաւ Նարոյի, ուր կատարեց իր ուխտագրութիւնը. և քիչ յետոյ Հռոմ՝ զրկուեցաւ և անկէջ Բարիդ, ուր զանի իր քովն ունենալ կ'ուզէր Դոմինիկեանց ընդհանրական Աբբան՝ Հ. Յովհ. Տեւոնիսի: Յետոյ զրկուեցաւ ի Գոլոնիա՝ Գերմանիոյ մէջ, ուր Մեծն Ալբերտոս, Ս. Տոմինիկոսի Կարգին ան առեւտրական ամենահաշակաւոր վարդապետը, աստուածաբանութիւն կը դասախօսէր՝ այնպիսի համբաւով, որ կարծես իրը պատգամ կը համարուէր: Թովմաս քանի մը տարի անոր քով աշակերտեցաւ և իր աստուածաբանութիւնը աւարտեց: Կատարելապէս խոնարհ էր, հլու, հնազանդ, հանդարտ ու բարկապաշտ. ժամերով կ'աղօթէր, մնացած ժամանակը կ'ընթեռնուէր, կը լսէր ու կը խորհէր ուշի ուշով ինչ որ կարդացած ու լսած էր: Ետ քիչ անգամ բերանը կը բանար խօսելու համար, դր վրան իր աշակերտակիցները կ'անուանէին զինքը համբ եղ, իր լուսութիւնը և իր ամփոփութիւնը բնական ապշութեան և թանձրամտութեան վերագրելով: Բայց Մեծն Ալբերդ, որ արդէն կը հեանար անոր հանձարին գեղեցկութեան ու դաստիարակութեանը ամբողջական հաստատութեան վրայ, բաւ օր մը. Դոմէ եղբայր Թովմասը մտնից եղ կը կոչէ. հաւատացէ՛ք ինձի, եթէ նա ապրի, այնպիսի բարձր ազոյ բառաչներ պիտի արձակէ, որ իր ձայնը պիտի արձագանգէ ընդ համայն աշխարհ:

Թովմաս թէեւ շատ աշխատեցաւ այն գերհազրուի Համայնարարին մէջ չառնուլ բնաւ ո և է աստուածաբանական աստիճան, սակայն հարկ եղաւ հնազանդի. և հազիւ թէ վարդապետի (Docteur) խոյն առաւ, ուղեցին որ հոն մեկնարանէ զՎարդապետն Վճռոց: Այնպիսի փառաւորութեամբ սկըսաւ նա այդ դասախօսութիւնը, որ գրեթէ առաջին օրէն իսկ հասաւ իր վարդապետին Մեծն Ալբերդի համբաւուն, և քիչ վերջը ամենէն գեր ի վերոյ եղաւ:

Ս. Բոնաւենդուրա, Ս. Փրանկիսկոսի Կարգէն, իր ընկերակիցն էր: Եւ քանի երկուքն ալ ունէին միեւնոյն զգացումները, միեւնոյն միտութիւններն ու միեւնոյն վախճանը, հետեւաբար շատ սերտիւ ու մտերիմ բարեկամներ եղան: Եւ յետոյ երկուքն ի միասին շատ եռանդով ու կորովով մաքառեցան՝ կրօնաւորական կարգերու ի պաշտպանութիւն, որոնց սրբութիւնն ու հիմերը քանդելու կը յանդգնէին մի քանի նախանձարեկ ինքնահաւաններ: Անոնք իրարու կ'այցելէին և հասարակաց օգտին ծառայել կըցող բաները իրարու կը հաղորդէին փոխադարձաբար: Կը պատմուի թէ օր մը Ս. Թովմաս գացած ըլլալով ի տես Ս. Բոնաւենդուրայի. տեսաւ որ նա զբաղած էր սերովբէանման Ս. Փրանկիսկոս Աստիգացոյն վարքը գրելու, և չուզելով զինքն ընդհատել, ետ դարձաւ ըսելով. «Թողունք որ Սուրբը գրէ Սուրբին վարքը»: Իր առաքելութիւնը իր ճանչցնէր իրեն՝ Ս. Բոնաւենդուրայի սրբութիւնը, և աստուածային լոյսը որ կը ցոլանար իր հոգւոյն մէջ, տեսնելի կ'ընէր իրեն ընկերոջը հոգւոյն փայլը՝ առանց անկից շանարու:

Գրորցներու մէջ խռովութիւնները խաղաղելով մեր Սուրբ Վարդապետը ընդ երկար շարունակեց դասախօսել ի Բարիդ, Պոլսիա, Հռոմ և Նարոյի, այս համալսարաններուն կենդանի ձայնով հաղորդելով իր վարդապետութեան շքեղութիւնը և իր գրքուածներուն միջոցաւ զայն բոլոր աշխարհ տարածելով: Արդ, իր վարդապետութիւնը այնպիսի է որ իրմէն վերջը եկող դարերու ամենամեծ գիտուններուն փառքը կը նսեմացնէ, ինչպէս արեւը ժամը աստղներուն փայլը կ'անհետացնէ: Եւ այնքան բարձր է այն որ կը սքանչացնէ ամենագորաւոր մտքերը, կ'ապշեցնէ միջակները. և ասոնք ամէնքն այնչափ աւելի յանձնարարելի կ'ըլլան և արժէք կ'ունենան, որչափ աւելի կը յարին այս մեծ Վարդապետին զգալու և խորհելու կերպին: Զկայ բան մը այնքան դժուարին, ըլլայ աստուածաբանութեան, ըլլայ փիլիսոփայութեան մէջ, որ նա գիւրացուցած չըլլայ. չկայ մութ բան մը որ նա լուսաբանած չըլլայ. չկայ ծածուկ ու խորհրդաւոր բան մը որ նա չյայտնէ: Վասն զի նա կը խօսի ամէն բանի վրայ այնքան հիմնական և հաստատուն համաւստութեամբ, որ անոր մէն մի բառը կ'արժէ մի պատգամ, և նա ինքը զինքը կը բացատրէ այնչափ զարմանալի յստակութեամբ, պայծառութեամբ, կարգաւորութեամբ ու կապակցութեամբ, որ իւր վարդապետութիւնը մտքերու աշքին պէս է: Ունէր ամենալուր ընական զգացում, կորովի յիշողութիւն և յոյժ թափանցիկ միտք. այնպէս որ մտքին մէջ պահել ուզած մէկ բանը բնաւ երբեք չէր մոռնար. և չկար կոճուտ բան մը որ իրեն դժուարութիւն տար: Ասոնց կը միանար՝ աշխատութեան մէջ անխոնջ արիւթիւն և Աստուծոյ շնորհաց արտասովոր օգնականութիւն:

(Շարունակելի)

Հոգեւոր ՄՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ԲՐԻՍՈՍՈՒՄ" ԳՐԲԷՆ

Գիրք Ա.—Գլ. Ե.—Ս. Գրոց ընթերցման վրայ:

ձշմարտութիւն պիտի քիսնուի Ս. Գրոց մէջ՝ եւ ո'չ պերճախօսութիւն:

Ամեն Ս. Գիրք այն ոգով պիտի կարդացուի որով գրուած է:

Ս. Գրոց մէջ կը պարտին աւելի քիսնուի օգտակարութիւն քիսնուի քի կը նշանակուի:

Հաւասար յօժարութեամբ պիտի կարդանք յեմեւանդ ու պարզ գրքեր, ինչպէս յարժ է խորհմանս գրութիւնները:

Գրողին հեղինակութիւնը չվարանցելէ զինք քի արդեօք աննշան կամ մեծահոգի գրագէտ էր, այլ անարտա ձշմարտութեան սերը միայն դրդէ զինք կարդալու:

Մի՛ քիսնուի քի ո'վ լսած է այս ինչ քանը, այլ միայն լսուածին միջ դի՛ր:

ՍՊԱՆԻՅԱ ԼՈՒՐԵՐ

Վերջերս Սպանիոյ վճռաբեկ ատենանը շատ կարեւոր վճիռ մը ստուաւ, որ Կաթողիկէութիւնը անամօթարար զրպարտողներուն մահացու հարուած մը եղաւ՝ բարոյական և նիւթական։ 1910 Սեպտ. 20ին Espana nueva հասարակապետական թերթը իբր թէ Թոթանա քաղաքէն իր առած շատ անուանարկիչ մէկ հեռագիրը կը հրատարակէր ի մասին կրօնաւորի մը և ազնուատոհմ օրիորդի մը փախուստին, երկուքն ալ յակնէ յանուանէ նշանակելով։ Մեծ եղաւ գայթակղութիւնը։ Liberal թերթն ալ հետեւեալ օրը ճիշդ նոյն դէպքին վրայ նոր հեռագիր մը հրատարակած էր։ Բարեբախտաբար կրօնաւորը իր վանքին մէջ էր և օրիորդը իր հօրը տան մէջ։ Երկուքն ալ ամէնէն յարգուած և կատարելապէս անխախտ։ Հերքումները ամէն կողմէն տեղացին և յիշեալ թերթերն ալ փութացին իրենց անխիղճ սուան հերքել։

Սակայն օրիորդին հայրը՝ Տօն Ռամօն Մուսայ, այդ հերքումը շատ պարզ բան պատառնելով իր աղջկան պատուոյն վերաբերմամբ։ շատ զիւրիւն բան էր այս գնով խաղալ ուրիշի պատուոյն հետ։ Դատ բացաւ։ Երկու թերթերն ալ խոստովանեցան իրենց խարդախութիւնը և ինքնահնար սուտը։ Տօն Ռամօնի փաստաբանը՝ Լա Թիէրվա, ուրիշ պատիժներէ զատ, կը պահանջէր հարիւր յիսուս հազար ֆր. փնտուց հատուցում։ Սպանիոյ մէջ անլուր բան։ այս տեսակ ահագին գումարները Անգղիոյ մէջ կը տուժուէին, ուր Daily Mail թերթը, օճառի մը համար ամենալաւը չէ ըսած ըլլալով դատապարտուեցաւ վճարել վաթսուս հազար ոսկի։

Սպանիոյ դատարանը իրաւունք ստուաւ գանգատողին։ այս վճիռը հաստատուեցաւ նաեւ վերաքննիչ ատենանի կողմանէ։ անցեալ Դեկտ. 16ին վճռաբեկ ատենանը նոյնպէս կը հաստատէր այդ վճիռը, որով այլեւայլ հրատարակութիւններէ զատ, դատապարտուեցան վճարել 150 հազար ֆր. ք.

Իսկ օրիորդը հետեւեալ օրն իսկ իւր հօրը թոյլտուութեամբ ամբողջ այս գումարն ընծայեց, իբր պրամագլուխ, որոյ եկամուտը ամէն տարի Դեկտ. 6ին իբր մրցանակ պիտի տրուի Սպանիոյ ամէնէն աղքատ քաղաքին, որ իրեն անայլայլ սկզբունք ըրած ըլլայ քաջ պաշտպան կենալ ընդհանուր բարոյականի և այլոց պատուոյն խղճամիտ յարգութեան։

*** Սպանիոյ նախարարապետ Ռոմանո-նէսի համար կ'ըսուէր թէ Ֆրանմասոն ըլլայ, սակայն ստուգուած է վերջերս որ այս լուրը կատարելապէս անճիշդ է։ մանաւանդ ընդ հակառակն ինքը իր կաթողիկէի պարտականութիւնները ճշգրտօրէն կը կատարէ, առ Աստուած և առ Ս. Եկեղեցի։ Չայս այսպէս կը հաւատայ El Universo հանրածանօթ թերթին Սպանիոյ։

*** Նոյն թերթը կու տայ ազատական ծանօթ Պ. Մօրէի դարձին մանրամասնութիւնները։ Նա՝ հիւանդացած ըլլալով, ինքնաբերաբար կոչած է ժողովրդապետը, և զղջալով իր բոլոր սխալներուն և անցուցած կեանքին վրայ, խոստովանեց է և ընդունեց է նաեւ վերջին Թոշակն ու վերջին Օծումը։ Պաշտօնական հերքում մըն ալ հրատարակած է իր մոլորական սկզբունքներուն դէմ։

ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՀՈՈՄ ԵՒ ԿԱՅՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ

Ս. Քահանայապետը ունինդրութեան ընդունեցաւ մարտ 1ին Արհի. Արհի. Շէնքլոն՝ Սանտի Արքեպիսկոպոսը, ալ Տիւրքօր՝ Լանկրի եպիսկոպոսը, Դարօ՝ Գամպրէի օգնական եպիսկոպոսը։

Եւսեբու Սուրբ Ժողովը քննութեան առաւ երանացման խնդիրը Քոյր Մարիամ-Թերէզ Տիւպուշէի, Հատուցանողական Երկրպագութեան Քերց Տիմա-գրին։

*** Մատրիտի Քահանայապետական դեպան Ռակոնէգի գերապայծառ Մարտ 5ին եկաւ Հռոմ՝ Գլխավորապէս ուր առաքելական պատգամաւոր էր։

*** Մալթայի Հաղորդութեան Միջազգային համաժողովին հանդիսաւոր բացումը պիտի կատարուի առաջիկայ Ապրիլ 23ին, Զորեքաբլթի օրը, Վա-

լեթի մէջ, նախագահութեամբ Ս. Աթոռոյ Պատուիրակ Վսեմաշուք Ֆէրրաթա Կարգինային: Ե. Վսեմաշուք Տէրութեան համնելու օրը, որ տակաւին որոշեալ չէ, շատ շքեղ ընդունելութիւն մը տեղի պիտի ունենայ:

Արարողութիւններն ու նիստերը պիտի տեւեն, ինչպէս նախորդ համաժողովներուն մէջ, չորեքշաբթի իրիկունէն մինչեւ կիրակի ներփակութար:

Ուրբաթ օրը, կէսօրէն վերջը, նաւահանգստին շուրջը հանդիսաւոր ցոյցեր տեղի պիտի ունենան:

Երկուշաբթի, Ձիվիթա-Վէքքիա ուխտի պիտի երթողի, ի պատիւ Ս. Պօղոսի, որ 6 ին Մալթա տաւ Ս. Աւետարանին հետ Ս. Հաղորդութիւնը:

Աշխարհիս ամէն կողմերը, Ապրիլ 27ին, կիրակի օրը, Ս. Հաղորդութեան մօտեցող ամէն ձաւաւսացեալ լիակատար ներողութիւն պիտի վատկին՝ դիտաւորութեամբ միանալով Ամենաուրբ Խորհուրդին մեծ թափօրին նոյն օրը իւրօք մանուկցողներուն:

Մալթայէն կը գրուի թէ շատ նաւեր յատկապէս պիտի պատարաստուին օտար համաժողովականները Մալթա բերելու համար, և պիտի կենան նաւահանգստին մէջ համաժողովին տեւողութեան միջոցին:

Մալթայի համաժողովին յատկացուած Աքաքսո նաւը ապրիլ 16ին Մարսիլիայէն պիտի մեկնի, 23ին Մալթա պիտի հասնի, մինչեւ Ապրիլ 27 հին պիտի մնայ և Մայիս 5ին Մարսիլիա պիտի վերադառնայ Թունիդի և Ալճերիոյ կողմերը շահեկան պտոյտ մը ընելէ յետոյ: Աքաքսո պիտի ունենայ մատուռ մը, ուր ամէն առաւօտ պատարագներ պիտի մատուցուին և ուր պիտի կարենան գումարուիլ համաժողովին նախապատրաստական տկուրները:

*. Վերջերս վախճանեցաւ Մ. Թիւրօ-Տանթէն, Գաղղիոյ ակադիմիային ցկեանս ատենագիրը, 76 տարեկան: Հանգուցեալը շատ բազմաբնիկ և եռանդուն կաթողիկէի կենանք մը անցուցեր է, պետական զանազան պաշտօններ վարելէ զատ աշխատակցեր է Գոռէսփոնսան և Ֆրանսէ թերթերուն, և հոսակ յետոյ ինքզինքը տուեր է ժամանակակից պատմութեան: Նշանաւոր է իր Յուլիան միապետութեան պատմութիւնը, ուր կը փայլին իր անզուգական ձերբերը, անսոգտանելի ոճը, բացարձակ անկողմնակալութիւնը: Այս եօթնհասարակ փառաւոր երկը երկու անգամ պատկուած է Ակադեմիայէն: Ունի հոյակապ երկասիրութիւններ կրօնի պատմութեան վրայ:

Մ. Թիւրօ Տանթէն ասպետ էր Պատուոյ-Լեգէնի և 1893էն ի վեր անդամ՝ Գաղղիոյ Ակադեմիային և 1908 Յունիս 27էն ի վեր ցկեանս ատենագիր նոյն Ակադեմիային:

Մ. Թիւրօ Տանթէն յուզարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Ս. Սիւլփիս եկեղեցւոյ մէջ, Հանգուցելոյն բաղձանքին համեմատ եկեղեցին գրեթէ անգարդ էր: Խմբարանին վարի կողմը կը բարձրանար ձեգ դապաղաբեմ մը: Սգակներնու գլխա-

ւորներն էին Ֆ. Պետրոս և Յովհաննէս Թիւրօ Տանթէն, հանգուցելոյն որդիները և Տրուլէր ու Ռընոտէն փեսաները: Ս. Սիւլփիսի ժողովրդապետ Լըթուռնօ Կաննիկոսը հոգեհանգստեան պատարագը զուրցեց: Բարիդի Կարգինայ Արքեպիսկոպոս Ամէթ Գերապայծառը իր կանոնիկոսներէն շրջապատեալ նախագահեց արարողութեանց: Ներկայ էին Պատ և Թէյլ Գերապայծառները: Պաշտօնըգութեան վերջը սկըսաւ անվերջանալի տողանցը վարչական և ակադեմական անձնաւորութեանց:

Յետոյ հանգուցելոյն մարմինը մեծ թափօրով տարուեցաւ Մօն-Փառնաս գերեզմանատունը և դրուեցաւ ընտանեկան դամբանին մէջ:

Հանգուցելոյն կամքին համակերպելու համար, ո՛չ բունախօսութիւն արտասանուեցաւ և ո՛չ ծաղիկ կամ՝ պսակ զրկուեցաւ:

*. Առաքելական Պալատան առաջնակարգ պաշտօնականներէն հանգուցեալ իշխան Բուսթօլի կինը իշխանուհի Էկլէ Բուսթօլի, վախճանեցաւ Հռոմ՝ ամսոյս 1ին. յուզարկաւորութիւնը մեծահանդէս շքով կատարուեցաւ: Մնած էր 1846ին:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ

Հաւատացեալները զատկական պարտուց կատարման ըստ պատշաճի պատրաստելու համար, ութօրեայ հոգեւոր կրթութիւն տրուեցաւ Ս. Աստուածածնի աթոռանիստ եկեղեցւոյ մէջ, Մարտ 3—9: Քարողիչն էր նոյն եկեղեցւոյ մեծաւորը՝ Գեր. Կղեմէս Վ. Աստուրեան: Մարտ 10—16 նոյնպէս հոգեւոր կրթութիւն տուաւ Ս. Յովհ. Ոսկերեան եկեղեցւոյ մէջ, Մեծ-Ժողովրդապետ Գեր. Յովհ. Թ. Մ. Վ. Կէտիկեան: Երկու քարողիչ վարդապետներն ալ յաջողութեամբ կատարեցին իրենց այս փափուկ նուիրական պաշտօնը: Ժողովուրդը, հակառակ օդին խստութեան, խուռն բաղմութեամբ քարողներուն ներկայ գտնուելով արդեամբ գնահատեց սուրբ կրթութեան անզուգական շահեկանութիւնը:

*. Մարտ 9ին կնքեց իր հարիւրամեայ կեանքը Մայր Թագուհի Ճէնտերէճեան: Անարատ Յղութեան կարգին հիմնադիրներէն մին: Յուզարկաւորութեան արարողութեան, որ մեծ հանդիսաւորութեամբ կատարուեցաւ Մայր-Վանատան մատուռին մէջ, նախագահեց Ամեն. Հոգեւոր Տիրոջ կողմանէ՝ Արհի. Յովսէփ Արքեպիսկոպոս Ռոքոսեան, Կ. Պատրիարքական փոխանորդը: Ներկայ էին Արհի. Արհի. Աւետիս Արքեպիսկոպոս Արքիարեան և Մատթէոս Եպիսկոպոս Սիւլփիս և բազմաթիւ վարդապետներ և Վանատան ու մօտակայ տեղերու բոլոր Գղղերն ու իրենց ուսանողութիւնը: Կը մաղթենք յաւիտենական հանգիստ Գղղ Թագուհի Ճէնտերէճեանի, և Ս. Հոգւոյն միութարութիւնը: Անարատ Յղութեան կարգի Առաքինի Գղղերուն:

*. Մարտ 11ին, Երեքշաբթի օրը, գումարուե-

ցաւ Կաթողիկոսարանի սրահին մէջ Կրօնական Ժողովը և զբաղեցաւ ինչ ինչ կարեւոր խնդիրներով:

*. Անկիւրիոյ Անտառատ Յղութեան Մայր-վանքին ընդհ. մեծաւորութիւն Առաքինազարդ Քոյր Ֆրանչիսկա անցեալ Յունուար և Փետրուար ամիսներուն մէջ երթալով Պիլէծիկ և Քիւթաշիա, ուր բաւական առեհեհ ի վեր նոյն Միտրանութիւնը առաքելութիւն հաստատած է, պլլցելեր է իրենց վանքերն ու գըրգըրցները և կանոնապահ բարեկարգութիւնը և իրենց խնամոց յանձնուած աղջկանց վարժարաններուն յարաճուն յառաջդիմութիւնը տեսնելով շատ գոհ մնացեր է և ըստ արժանւոյն գնահատեր է Առաքինի Քոյրերուն փոյթն ու ջանքը:

Ն Ե Ր Ք Ի Ն Գ Ո Ր Ծ Ե Ր

Պաշտօնեան զինակցութեան դիմադրող երեք բերդաքաղաքներէն մին՝ Եանիա ինկաւ Յունաց ձեռքը ամուսն Յին հինգշաբթի օրը: Քաղաքին քաջարի պաշտպանը՝ Էստտ փաշա, բերդին տիրապետող բոլոր դերքերուն յոյն բանակին կողմէ գրաւուելէ վերջը, չորեքշաբթի գիշեր պատերազմական խորհուրդ մը գումարեր է: Սպաները միաձայն որոշեր են անձնատուր ըլլալ պարապ տեղը արիւնհեղութեան տեղի չատու համար: Ասոր վրայ Ռուսիոյ, Ֆրանսոյի, Աւստրիոյ և Ռումանիոյ հիւպատոսներուն միջոցաւ քաղաքին անձնատուր ըլլալը կը հաղորդուի հելլէն գահաժառանգ իշխանին, որ իր բանակով քաղաք կը մտնէ յաղթանակաւ: Փահաժառանգը գնահատելով Էստտ փաշայի որ անոնք իրենց սուրերը պահէ և կ'ըսէ Էստտ փաշային. Հետոսներուն սուրը չ'առնուիր:

Քաղաքը պաշարող հելլէն զօրքին թիւն էր 60,000, իսկ Թուրքերուն թիւը 30,000: Հելլէններուն կորուստը կը համարուի հինգ վեց հազար: Եանիա Եպիսոփ մայրաքաղաքն է և ունի իր 30,000 բնակիչ:

Եանիայի անկումը մեծ ազդեցութիւն կ'ընէ պատերազմի և հաշտութեան պայմաններուն վրայ:

*. Անշարժ ստացուածքներու մասին վերջերս օրէնք մը հրատարակուեցաւ, որուն համեմատ, մաս-

նաւորներու տնունին արձանագրուած կալուածները կրնան փոխանցուիլ բարոյական տնուններու վրայ, հիւանդանոց, օրանոց, եկեղեցի, վարժարան ևն: Այս փոխանցումը կատարելու տուն պատկանեալ պաշտօնատունը ու է ծախք պիտի չպահանջէ, բաց ի զայիսիւ տուրքէն: Այս մասին հարկ եղած գործողութիւնները անմիջապէս պիտի կատարուին, պայմանաւ որ այն մասնաւոր անձը որ կ'ուզէ իր տնունան արձանագրուած կալուածները հիւանդանոցի մը կամ ու է հաստատութեան մը փոխանցել, պարտաւոր պիտի ըլլայ պէյաննամէ մը տալ իր յօժարութիւնը յայտնող, անձնական ստորագրութեամբ, որ պիտի վաւերացուի Պատրիարքարանի կողմէ:

*. Փետր. 16ին, գիշերուան ժամը 3ի մօտերը Բաքիօթիք ընկերութեան Գալվասոս շրջէնաւը, որուն մէջ կը գտնուէին սուրհանդակի պայուսակները և բազմաթիւ ուղեւորներ, Պանարմայի մօտ նեղուցին բերանը գտնուող Ս. Ատրէ կղզիին ժայռերուն վրայ իյնալով փրուէր ու ընկզմը է: Նաւուն 18 նաւազները և ուղեւորներէն 145 հոգի ազատեր են:

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Ձալը ուղելով Ռումանիոյն հարստութեան երեք հարեւրամայ յորեկանը արժանապէս փառաւորել և զայն յաւերժացնել ժողովուրդին մտքին մէջ, Յերակուտին ուղղեց հրովարտակ մը, որուն մէջ կը հրամայէ միջոցներ ձեռք առնուլ ի նպաստ որբերուն, գիւղացիներուն և հողագործներուն: Ներում կը շնորհէ մամուլի յանցաւորներուն, կը հրամայէ դարձեալ համալսարաններն ընդունիլ արգելուած ժողովներու ներկայ գտնուելուն համար վտարուած ուսանողները: Ներում կը շնորհէ քաղաքական և հասարակ յանցաւորներու համար: Մահու վճիռները կը փոխուին քսանամեայ ատժանակի աշխատութեան: Օտար երկիր ընակել հարկադրուած ուսանողներուն թոյլ կը տրուի դառնալ Ռուսիա — Աստք և ասոնց նման ուրիշ ժողովրդեան նպաստաւոր արամագրութիւններ շատ խանդավառ տպաւորութիւններ գործեր են հանրութեան վրայ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Դեպքեր եւ սկզբունքներ	161
Քարոզ Յիսուսի չարչարանաց վրայ	164
Տէր Կովիսա բահանայ	169
Հայ-Կաթողիկէ հասարակութիւնը	171
Եօթնակ Բիսպոսներ	172
Սպանիոյ լուրեր	174
Տեղեկագրական	174

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎՀ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԴԱՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. ՎԱՐԴ. ԹԵԳԻՊԱՇԵԱՆ

Տպագր. Կ. Արծազանգ Շաքարաբերի, Բերա, Պայրամ փողոց քիւ 5, Կ. Պալ ս



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ.—Թուրքիոյ համար, տարեկան՝ 40 դիկ. արծ. վեցամսեայ՝ 20.—
մէկ թիւ՝ 1 դիկ.:— Արտասահման՝ տար. ժր. 10. վեցամս. 5.—Վարձուով կանխիկ են:

ՀԱՍՅԷ.— Կարողիկէ Արձագանգ, Բերա, 5 Պայրամ փողոց 5, Կ. Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆԻՆ.— 1.—Արձագանգ կը նրաստակուի Շաքաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ անպատճառ կամ նոյնութեամբ նրաստակել իրեն ղրկուած ո եւ է յօդուած: 3.—Կեղծանունով ղրկուած յօդուածներու հեղինակը կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին: 4.— Ձեռագիրներ եւ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու ձեռագիրները պէժ է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը միայն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւն կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէժ է անհրաժեշտ երկու դանեկանի նամակադրոժ ի միասին ղրկել:

ՏՊԱՐԱՆ Կարողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս բոս ամենայնի նոյն եւ ի վիճակի է որ եւ իցէ տպագրական զործնց համար: Կը տպուին ամէն տեսակ ծանուցումներ, զիրեր, տեսներ, հրախրագիրներ, բարդեր, բարդ-աստիճաններ, մանագրներ, եւն., եւն.: Գիները ամենայնի կերպով ածան են: Գեղեցկագիտական նաւակի եւ տպագրական մագրութեան կողմանէ յաճախողները անտարակոյս գոն պիտի մնան:

ԿԸ ԾԱՆՈՒԹԻ «Տարական Սկզբունք Բիւստնէական Վարդապետութեան» հաստատեալ եկեղեցական իշխանութենէ եւ կիրառութիւնը հրամայեալ: Բաղկացած է 136 էջերէ: Գին, ամուր թղթակազմը 2 դիկն.:
